մատենագրության մեջ ամենուրեք Ամենափրկիչ եկեղեցու կառուցողները համարվել են Աշոտ Ողորմածն ու Խոսրովանուշ թագուհին, իրենց որդիներով և ոչ թե Կյուրիկյան թագավորների հետագա սերունդները։

2. Սանահնում է թաղված տաճարի կառուցող Գուրգեն թագավորը, որի տապանաքարն ունի հետևյալ արձանագրությունը.

Այս է հանգիստ Գուրգենա Բագրատունո շահանշահի, որդի Աշոտոյ Ողորմածի։

3. Բարսեղ Կեսարացու «Ցաղագս ճգնաւորաց» գրքի հիշատակարանի մեջ, որ պահպանվել է Սանահնի «Քոթուկում», Սիմեոն գրիչն իբրև ականատես վկայում է, որ Սանահնի նորաշեն վանքը կառուցել է տվել հայոց շահանշահ Աշոտի ամուսին Խոսրովանուշ թագուհին։ Ինքը՝ Սիմեոն կրոնավորն այդ վանքում եղել է քարտուղար և 972 թվականին արտագրել է «Ցաղագ ճգնաւորաց» գիրքը։ Իբրև ականատես նա չէր կարող սխալվել այդ հարցում։

4. Սմբատի թագավորական տիտղոս ունենալը խիստ կասկածելի է, որովհետև Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեի թագավորության ժամանակ, ինչքան մեզ հայտնի է պատմությունից և վիմական արձանագրություններից, Սմբատը, որ ըստ ոմանց Դավիթ Անհողինի եղբայրն է և ըստ այլոց (Brosset) նույն Անհողինի որդին, Կյուրիկեին գահակից չի եղել, և այդ ժամանակներում Լոռիում երկիշխանության գոյությունը մեզ հայտնի չի։ Միայն 1063 թվականի մի արձանագրության մեջ է Սմբատը Կյուրիկեի հետ միասին թագավոր համարվել (№ 179)։ Սակայն, այդ արձանագրությունը, որ գտնվում է բոլորակ ս. Գրիգոր եկեղեցու պատին, այժմ ծածկված է թիթեղյա նոր ծածկի տակ, մատենադարանի և բոլորակ եկեղեցու արանքում և չի երևում, ուստի և այժմ անհրաժեշտ է տեղում ստուգել պարզելու համար, թե Ղրիմեցին և արձանագրության մյուս ընդօրինակողներն այդ բառերը ի՞նչ չափով են ճիշտ կարդացել։ Ընդհանրապես, նկատի ունենալով արձանագրությունների հին հրատարակիչների՝ վերծանության մեջ տեղ գտած բազմաթիվ սխալները, Սմբատի թագավոր լինելու հանգամանքը ևս կասկածի տակ ենք առնում, մանավանդ որ հենց նույն տաճարի պատին ընդամենը դրանից երկու տարի առաջ՝ 1061 թվականին փորագրած արձանագրության մեջ իբրև թագավոր է հիշատակված միայն Կյուրիկեն, իսկ Սմբատի անունը բոլորովին չկա։ Պարզ է, որ եթե Սմբատը, իրոք, գահակից թագավոր լիներ, նրա անունն այս արձանագրության մեջ ևս հիշատակված կլիներ։ Ինչ էլ որ լինի, Սմբատը երբեք Սանահնի մեծ եկեղեցու կառուցող չի կարող համարվել։

5. Գանձակեցին Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման մասին ոչինչ չի գրում, այլ միայն Սանահնի (ինչպես նաև Հաղբատի) վանքի հիմնադրումն է վերագրում Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեին։ Նա ոչ մի խոսք չի ասում նաև Դավիթ Անհողինի եղբոր՝ Սմբատի մասին, իբրև վանքի հիմնադիր։ Սմբատի անունը Բրոսսեն և նրա հետևողները, միայն բարձրաքանդակների հիման վրա, կապում են Կյուրիկեի անվան հետ և դարձնում վանքի հիմնադիր՝ առանց որևէ հիմքի։

Սանահնի բարձրաքանդակները, որ Ամենափրկիչ եկեղեցու կառուցողներին են ներկայացնում, եթե համարենք 11-րդ դարի գործ, ապա պետք է ընդունենք, որ եկեղեցին ևս այդ ժամանակ է շինված, որ հերքվում է միջնադարյան բոլոր հայ պատմագիրների միահամուռ կերպով տված վկայություններով։

6. Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեն թագավորել է 1048—1089 թվականներին[1]։ Նշանակում է, ըստ Գանձակեցու վերոհիշյալ վկայության, Սանահնի վանքը հիմնադրվել է 1048—1089 թվականների ընթացքում, բայց նույն Գանձակեցին իր պատմության մի այլ տեղում գրում է, որ

«Թագաւորն Յովանէս գժտութեամբ լեալ ընդ հայրապետին Պետրոսի, դնէ զնա ի բանտի. և զԴեռսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Սանահին, բերեալ ձեռնադրէ կաթողիկոս փոխանակ Պետրոսի»[2]։

[1] Հ. Ղ. վ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմ., էջ 49։
[2] Պատմ. Հայոց, աբարեալ Կիրակոսի վ. Գանձակեցւոյ, էջ 83—84։